«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը կրտսեր դպրոցում |
| ԱՌԱՐԿԱ | Դասվար |
| ՀԵՂԻՆԱԿ | Անահիտ Պողոսյան |
| ՄԱՐԶ | Երևան |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Սիամանթոյի անվան հ. 162 հիմն. դպրոց |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....3

ԳԼՈՒԽ 1. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ .....5

1.1 Աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների էությունը .....5

1.2 Աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների բովանդակությունը.....8

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ .....10

2.1 Աշակերտների կարդալու կարողություն. բաղադրիչներն ու .....10

ընդհանուր բնութագրիչները.....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....15

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության կարևորությունը**: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:

Կարդալու կարողության դասերի ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք հատկանիշների դաստիարակում:

Կարդալու կարողությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում:

Կարդալու կարողությունը երեխայի ճանաչողության գործընթացը, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները զարգացնելու միջոց է:

Կարդալու ժամանակ ուսուցիչը կարդում է գրական ստեղծագործություններ, իսկ աշակերտը, հասկանալով ընթերցված նյութը, ակտիվացնում է մտածական գործընթացները, ինչը կարևոր նախապայման է դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար: Կարդալու պահանջներն առաջին դասարանում հետևյալն են.

- կարողանալ ունկնդրել,
- հարցերի օգնությամբ վերարտադրել ուսուցչի կարդացած կամ պատմած փոքրածավալ հեքիաթները,
- կարողանալ պատմել ըստ ունկնդրածի, տեսածի, հիշողության, նկարի և այլնի:

**Հետազոտության նպատակը**: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը կրտսեր դպրոցում:

**Հետազոտության խնդիրներն են՝**

Նպատակից ելնելով աշխատանքում բացահայտել ենք հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել աշակերտների կարդալու կարողության զարգացման ուղղված աշխատանքները կրտսեր դպրոցում
- Բացահայտել կարդալու կարողության ուսուցման ժամանակակից մեթոդների անհրաժեշտությունը տարրական դպրոցում

**Հետազոտության կառուցվածքը**

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն նյութից, եզրակացությունից, գրականության ցանկից:

# ԳԼՈՒԽ 1. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

## 1.1 Աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների էությունը

Կարդալու կարողությունը սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է[1]:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդակցի ճշմարիտի և սխալի, բարու և չարի, սիրո և ատելության, մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը, իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացում[2]:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի. հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված [3] :

Վերոնշյալի լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը, խոսքի

---

[1] **ԽաչատրյանՍ.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:

[2] **Գյուլամիրյան Ջ.**, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

[3] **ԹորոսյանԿ.**, **Չիբուխչյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում //«Նախաշավիղ», Երևան, 2010, N6:

արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա: Ասել է թե՝ ընթերցված նյութի վերարտադրության առաջին փուլը անմիջականորեն առնչվում է կարդալու ուսուցման տեխնիկային: Կարդալու կարողության շնորհիվ է զարգանում պատմելու մեթոդիկան, քանի որ ընթերցանության դասերին ամենակարևորը կարդացածը հասկանալն է[4]:

Առաջին դասարանում կարդալու նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը և այլն: Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթերցումն ու այն դարձնում ցանկալի:

Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում է բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեցությունը:

Հեքիաթը կարևոր տեղ ունի ոչ միայն առաջին դասարանի, այլև առհասարակ տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում, քանի որ հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, այն միևնույն ժամանակ կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է: Այս առումով հեքիաթի ունկնդրումը նպատակաուղղված նշանակություն է ստանում: Կարդալու միջոցով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պետք է մեկնաբանվի, իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով[5]:

---

[4] **Գյուլամիրյան Ջ.**, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

[5] **ԹորոսյանԿ.**, **Չիբուխչյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում //«Նախաշավիղ», Երևան, 2010, N6:

Ունկնդրումը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ունկնդրումը ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար[6]:

[6] **Գյուլամիրյան Ջ.**, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

## 1.2 Աշակերտների կարդալու կարողության զարգացմանն ուղղված աշխատանքների բովանդակությունը

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը: Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն[7]:

Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ունկնդրման ժամերի հիմնական խնդիրներն ու նպատակները 1-ին դասարանում հետևյալն են.

- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,

[7] **ԽաչատրյանՍ.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:

- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարն ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

# ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

## 2.1 Աշակերտների կարդալու կարողություն. բաղադրիչներն ու ընդհանուր բնութագրիչները

21-րդ դարում ավելի ու ավելի դժվար է դարձել երեխային ստիպել գիրք կարդալ, զբաղվել ընթերցանությամբ, չնայած որ գրքի դերը անձի զարգացման գործում մնում է անփոխարինելի: Աշխարհն արագորեն փոփոխվում է, դառնում ավելի ու ավելի վիրտուալ, հետևաբար ընթերցանության խթանման ձևերը նույնպես պիտի փոխվեն և համապատասխանեն նոր ժամանակների պահանջներին:

Կրթության կազմակերպման և բովանդակության ձևավորման ուղղությամբ արևմտաեվրոպական մանկավարժության մեջ 19-րդ դարի սկզբից տարածված նորարարական գաղափարներն արդեն նույն դարի կեսերից թափանցեցին հայ իրականություն՝ հիմնականում ռուսական կրթական համակարգի փոփոխություններին իբրև արձագանք և միջնորդավորված դրանցով: Այդ նոր գաղափարները, մանկավարժական նորամուծությունները վերաբերում էին առավելապես գրաճանաչության ուսուցման և ընթերցանության մեթոդների արդյունավետության հարցերին: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ տվյալ ժամանակաշրջանում առավել տարածված էին տարրական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները: Առաջին նորարար մանկավարժների շարքում էին Ստեփանոս Նազարյանը, Միքայել Նալբանդյանը, Հարություն Բերբերյանը, որոնց գաղափարները հետագայում՝ 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած իրեն տեսական և պրակտիկ գործունեությամբ շարունակեցին Սեդրակ Մայդինյանը, Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Բահաթրյանը, Ստեփանոս Պալասանյանը, ուրիշներ:

«Կարդալ կնշանակե մտածել: Բացի աչքից ու բերանից, ընթերցանության ժամանակ հոգին նույնպես պիտի ի գործողություն գրգռվի: Մարդս ընթերցանելիս պիտի մտածե, նա ընթերցածը պիտի հասկանա և, եթե հասկանում է, նա այդ պիտի ապացուցե յուր ընթերցանության գեղեցկությամբ»,- ասում էր Ա. Բահաթրյանը[8]:

[8] Բահաթրյան Ա. Ընթերցարանը և նորա նշանակությունը, գիրք 2-րդ, Երևան, 1961:

Հայ մանկավարժական միտքը մշտապես հետամուտ է եղել կրտսեր դպրոցականների ընթերցանության մշակույթը բարձրացնելու միտված նոր մեթոդների և ուսուցման ձևերի որոնմանը, առաջավոր փորձի ներդրմանը դպրոցական ուսուցման համակարգ: Ահա թե ինչու, նույնիսկ 19-րդ դարի վերջին երկու տասնամյակներում հայկական դպրոցների չգործելու պարագան չխանգարեց, որ դպրոցների վերաբացման հետ նորից հայ մանկավարժական միտքը զարթոնք ապրի, դրվի ավելի գործնական հիմքերի վրա: 20-րդ դարի սկզբներին հրապարակ եկան Ստեփանոս Լիսիցյանի, Հովհաննես Թումանյանի, Լևոն Շանթի, Ավետիք Իսահակյանի, Մանուկ Աբեղյանի հայոց լեզվի (մայրենիի) դպրոցական դասագրքերը: Ինչպես նկատելի է վերոբերյալ անունների ցանկից, ընթերցանության խնդիրը հայոց մտավոր կյանքում ուներ նաև գործնական կարևորություն, եթե գործին մասնակից էին մեծահամբավ գրողներն ու գիտնականները: 20-րդ դարում տարրական կրթության մեթոդիկայի, այդ թվում ընթերցանության մշակույթի բարձրացման խնդիրներին հետևողականորեն և բազմաթիվ ուսումնասիրություններով անդրադարձավ Աշոտ Տեր-Գրիգորյանը, ում ներդրումը տարրական կրթության մեթոդիկայի ոլորտ համարվում է կարևոր և նշանակալից: Ա. Տեր-Գրիգորյանի մեթոդաբանական շատ լուծումներ և առաջարկություններ մեր օրերում էլ արդիական են և կիրառվում են հայոց դպրոցում[9]:

Կարդալու ընթացքում անչափ կարևոր է բառապաշարի ձևավորման, զարգացման, մաքրման և հարստացման բաղադրամասը: Այն աշակերտի և ուսուցչի համատեղ, համառ և ներդաշնակ աշխատանքի արդյունք է: «Բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է, որ սկսվում է երեխայի կողմից շրջապատի աշխարհը ճանաչելու և գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ օրից և անդադրում կերպով շարունակվում է մինչև իր կյանքի վերջը, որովհետև ճանաչումն ու ընկալումը հիմնականում տեղի է ունենում բառերի մեջ և բառերի միջոցով»: Մեթոդապես կատարված ճիշտ ուղղորդումները շատ արագ են ներգործում աշակերտի վրա, նպաստում նրա կողմից գործածվող բառերի քանակի, այսինքն՝ **ակտիվ բառապաշարի** ընդլայնմանը:

[9] Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիչն ինչպես երեխային օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել նրա հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ. բավական է պարտադրանքն այդ ուղղությամբ: Դպրոցում ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունների զարգացումը հնարավոր է արտադասարանական ընթերցանության միջոցով: Դա լայն հնարավորություններ է ստեղծում սովորողի ճանաչողական գործընթացների զարգացման, գրքի նկատմամբ հետաքրքրության դաստիարակության գործում: Տվյալ թեմայի վերաբերյալ մայրենիի դասին հանձնարարված գրականություն ուսումնասիրելով՝ երեխան ինքնաբերաբար մտնում է ընթերցողական դաշտ և կապվում է գրքին: Սակայն միայն կարդալ սովորեցնելը քիչ է: Կ. Ուշինսկին ասում էր՝ կարդալը դեռ ոչինչ չի նշանակում. ի՞նչ և ինչպե՞ս կարդալ. սա է գլխավորը [10]: Ընթերցանության ուսուցումը միջոց է խոսքի զարգացման ծրագրային խնդիրների իրականացման համար: Տարրական դպրոցի մայրենիի առարկայական ծրագրում հատուկ տեղ է տրված ընթերցանության ուսուցմանը, որը խոսքի զարգացման աշխատանքի վերջնական նպատակն է: Կապակցված խոսքի ստեղծումը, որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած ընթերցանության ուսուցման գործընթացում առանձնահատուկ տեղ ու արժեք է ստանում:

Հարկավոր է վստահություն սերմանել նրանց մեջ իրենց իսկ ուժերի նկատմամբ՝ աստիճանաբար մղելով ինքնուրույն աշխատանքի: Աշակերտներին կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլ նաև անծանոթ տեքստեր (աշակերտը ընթերցել սովորում է ոչ թե նույն նյութը բազմաթիվ անգամներ ընթերցելով, այլ անծանոթ նյութի շարունակական ընթերցմամբ): Կարդալու հմտությունների զարգացման լավագույն միջոց է ինքնուրույն ընթերցանությունը: Երեխաներին գրքին «կապելու» աշխատանքը պետք է հնարավորինս շուտ սկսել (սկսած գրաճանաչության շրջանից): Որպես միջոց՝ արդյունավետ է արտադասարանային աշխատանքի ճիշտ կազմակերպումը,

[10] Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, Լույս, 1981:

որի միջոցով առաջադրված նյութերը խիստ կհետաքրքրեն երեխային, և նա կկապվի գրքին [11] : Դպրոցական ուսուցման ամբողջ ընթացքը մեծապես կախված է ընթերցանությանը հաջող տիրապետելուց. որքան բարձր է ընթերցանական մշակույթի մակարդակը, նույն չափով մեծ է ընդհանուր կրթական ձեռքբերումների հավանականությունը: Ահա թե ինչու ինչպես նախկինում, այնպես էլ այսօր կարևորագույն նշանակություն է տրվում սովորողների ընթերցանական մակարդակի և որակի բարձրացմանը: Իսկ դրա հիմքերը դրվում են տարրական դասարաններում՝ առաջին դասարանից սկսած[12]: Նկատենք նաև, որ ընթերցանությունը մի բնագավառ է, որը ուսուցչին ստեղծագործական մոտեցման մեծ հնարավորություններ է տալիս, և այս առումով այն նաև ժամանակակից մանկավարժության առաջանցիկ զարգացող մեթոդաբանական ոլորտներից է: Ռուս մանկավարժագետ, մեթոդաբան Ն. Բետենկովայի մեթոդիկայով՝ կրտսեր դպրոցականների ընթերցանության ուսուցումը իրականացվում է բարձր տեմպով և շատ հետաքրքրաշարժ եղանակով, ինչը դրականորեն է ազդում կրտսեր դպրոցականների մտածողական գործունեության զարգացման վրա:

Հարկ է ընդգծել, որ ուսուցման այսպիսի դրվածքը աշակերտներին անխուսափելիորեն ուղղորդում է դեպի գիտակցված ուսուցումը՝ ամրապնդելով իրենց ուժերի վրա վստահությունը և հավատը: Ըստ մեկ այլ տեխնոլոգիայի (Ն. Զայցևա)՝ ամբողջ ուսուցման համակարգի կենտրոնում երեխան է՝ որպես գործունեության և հաղորդակցման սուբյեկտ: Այս տեխնոլոգիայի հայեցակարգային դրույթներն արտացոլում են ընթերցանության յուրացման ունակության առանցքային միտումները, ուսումնական գործունեության եղանակներին տիրապետելը: Թվարկենք դրանցից հիմնականները. երեխաների խոսքի ձևավորումը և ընթերցանության ուսուցումը պետք է ընթանան զուգահեռաբար՝ միմյանց օգնելու պայմաններում. հրաժարում հնչութային սկզբունքից. ուսուցման միավորումը երգեցողության հետ. ճանապարհը դեպի ընթերցանություն անցնում է գրավորի խոսքի միջոցով, հիշողության բոլոր ձևերի օգտագործում, ընկալում բոլոր զգացական օրգաններով,

[11] Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում //«Նախաշավիղ», 2010, N6:
[12] Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ», Երևան, 2013:

առավելագույն իրազննականություն, երեխաներին չծանրաբեռնել տերմիններով[13]: Ն. Զայցևայի մեթոդիկայի հայեցակարգային դրույթները արտահայտում են երեխաների կողմից ընթերցանական կարողությունների յուրացման առանցքային միտումները, որոնք ձեռք են բերվել ուսումնական գործունեության միջոցով: Այսպիսով՝ ընթերցանության ուսուցումը ենթադրում է հին և նոր մեթոդիկաների համադրական օգտագործում, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ներառում կրթական համակարգ:

Ուսուցիչը կարդալու դասի ժամանակ խաչաձև հարցեր է տալիս տարվա եղանակների, ամիսների, օրերի, դրանց հաջորդականության և այլնի մասին: Աշակերտները ակտիվ ու ճիշտ պատասխանում են հարցերին: Աշակերտների պատասխաններն աչքի են ընկնում դիպուկությամբ, ճշգրտությամբ և սեղմությամբ: Ուսուցիչը հետաքրքիր հնարք է կիրառում. աշակերտները երգում են տարվա եղանակներին նվիրված մի մեղմ երգ, որում կան բոլոր ամսանունները: Նրանցից յուրաքանչյուրը ոտքի է կանգնում այն պահին, երբ երգվում է իր ծննդյան ամսվա մասին: Ստացվում է այնպես, որ ողջ դասարանը աստիճանաբար ոտքի է կանգնում: Հետո դարձյալ նույն հերթականությամբ ու նույն սկզբունքով նստում են, երբ երգում են վերջին կրկներգը[14]:

Կիրառված մոտեցումը տպավորիչ է, և պարզ է, որ աշակերտները ամփոփ պատկերացում ունեն եղանակների ու ամիսների մասին: Ուսուցչին այդկերպ հաջողվում է միջառարկայական կապ ստեղծել կարդալու ու երաժշտության միջև՝ իմացությունը ամրապնդելու, խոսքը երաժշտությամբ ընկալելու նպատակով: Ըստ իս շահեկան կլինի, եթե դասարանում նույն պահին աշակերտներն ունկնդրեն Ա. Վիվալդիի «Տարվա եղանակները» ստեղծագործությունից մի հատված ուսուցչի ընտրությամբ: Դա գերազանց կլինի, մանավանդ եթե ուսուցիչը ուղղորդի աշակերտների զգացողությունը:

---

[13] Обучаем грамоте по "Азбуке" Н. М. Бетеньковой, В. Г. Горецкого, Д. С. Фонина: пособие для учителя, 2007, Смоленск

[14] **ԽաչատրյանՍ.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարդալու կարողության զարգացման աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Ճիշտ է նկատում Գ. Ի. Շչուկինան, որ ուսուցումը պետք է մշտապես լրացվի գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը և դպրոցականների բազմակողմանի գործունեության կազմակերպմանն ուղղված կարդալու դասընթացով: Սովորողների հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև կարդալու դասերի ընթացքում: Քանի որ կարդալու դասերին բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և կազմակերպման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը:

Անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում գրական ունկնդրումը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին: Ունկդրման ժամերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի

փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում: Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ:

Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

Առաջին դասարանում գրական ունկնդրումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

- զրույցը,
- բնագրի ընթերցումը,
- բառային աշխատանքը,
- պատմումը,
- ամփոփումը:

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը:

Այդ որակներն են՝

- ճիշտ կամ անսխալ կարդալ,
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ:

Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա «իր վրա է վերցնում» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Այսպիսով՝ կարդալու կարողությունը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

- ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը,
- վերլուծական հմտությունների դրսևորմանը,
- ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը,
- կրթության զարգացանը և այլն:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Բահաթրյան Ա.** Ընթերցարանը և նորա նշանակությունը, գիրք 2-րդ, Երևան, 1961:
1. **Գյուլամիրյան Ջ.**, «Մայրենի լեզու» դասագրքի մեթոդական ուղեցույց,Երևան, 2004:
2. **Գյուլամիրյան Ջ.**, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
3. **Գյուլամիրյան Ջ.**, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
4. **ԹորոսյանԿ.**, **Չիբուխչյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում //«Նախաշավիղ», Երևան, 2010, N6:
2. **Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում //«Նախաշավիղ», 2010, N6:
3. **Խաչատրյան Ս.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ», Երևան, 2013
5. **ԽաչատրյանՍ.**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:
4. **Կ. Դ. Ուշինսկի**, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, Լույս, 1981:
6. **Կանեցյան Գ.,** Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990:
7. **Տեր-Գրիգորյան Ս.,** Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980
8. Обучаем грамоте по "Азбуке" Н. М. Бетеньковой, В. Г. Горецкого, Д. С. Фонина: пособие для учителя, 2007, Смоленск.